ՆՈՐ-ԴԱՐ

№ 122 ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հաբաթ, 28 Յուլիսի 1901 Հաբաթ, 28 Յուլիսի ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 122

Յաշեկան 10 բուբլի, վեց ամիսը՝ 6 բուբլի, երեք ամիսը 3 բ.50 կ., ամիսը՝ 1 բ., հատով 5 կ.։ Բաժանորդ են գրւում Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis, Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի ազգ օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., բեկլամների համար կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա ռ ա ջ ն ո ր դ ո ղ. — Քաղաքական աշխարհից։
Ք ր ո ն ի կ ո ն.— Լուրեր։
Մեզ գրումեն.— Սիբերիայից։ Նոխուց։
Նամակ խմբագրութեան։
Դարձեալ եղիշէ վարդապետ Մուրադեանը։
Դարձեալ Պարիզի հայոց եկեղեցին։
Տիկին Կրիւգերի մահը։
Ք ա ղ ա ք ա կ ա ն. — Հարաւային-Աֆրիկա։ Սերբիա։ Բուլգարիա։
Հեռագրական լուրեր։
Բ ա ն ա ս ի ր ա կ ա ն.— Գրողի նկատողութիւններից։
Տ ե ղ ե կ ա տ ու։
Յ ա յ տ ա ր ա ր ո ւ թ ի ւ ն ն ե ր։

Թիֆլիս, 27 յուլիսի 1901 թ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ

—

Գերմանիայի այրի կայսրուհի Վիկտորիան՝ այժմեան կայսր Վիլհելմի մայրը՝ վախճանուեց ծանր հիւանդութիւնից յետոյ։ Վիկտորիա կայսրուհին Անգլիայի հանգուցեալ Վիկտորիա թագուհու անդրանիկ դուստրն էր, որի կրտսեր եղբայրը Էդուարդն Անգլիայի այժմեան թագաւորն է։

Հանգուցեալ Վիկտորիա կայսրուհին շատ կարճ ժամանակ մնաց կայսերական գահի վրայ, որովհետև նրա ամուսին Ֆրիդրիխ կայսրը, այժմեան կայսրի հայրը, կոկորդի ծանր հիւանդութեան զոհ գնաց՝ կարճ ժամանակ միայն կարողանալով թագաւորել, և նրա թագաւորութիւնն աննկատելի անցաւ, թէպէտև իբրև թագակիր գերմանական ժողովրդի ընտիր մասը նրանից լաւ բաներ էր սպասում։

Վիկտորիա կայսրուհու մահն եւրոպական քաղաքական ընթացիկ խնդիրների և դրութեան վրայ ոչ մի ներգործութիւն չպիտի անէ. նոյնը կարելի է ասել Հարաւային Աֆրիկայի պատերազմի վերաբերութեամբ, ի նկատի առնելով Կրիւգերի կնոջ մահը։

Ճշմարիտ է, իբրև մարդ և իբրև ամուսին Կրիւգերը շատ վշտացաւ իւր ամուսնու մահն իմանալով, բայց այդ հանգամանքը նրան չի խանգարիլ կատարելու լրիւ իւր այն պարտաւորութիւնները, որ ունի իւր ժողովրդի վերաբերմամբ։

Չինական կռիւներն էլ վերջացան, ըստ երևոյթին, և, գոնէ առ ժամանակ, խաղաղութիւնը վերականգնած է Չինաստանում, դաշնակից եւրոպական զօրքերի հրամանատար ֆելդմարշալ դրաֆ Վալդերզէն վերադառնում է Բերլին, և, ի հարկէ, առաջ փառաջ կընդունեն նրան...

Բայց Հարաւային Աֆրիկայում պատերազմը, կռիւը շարունակւում է. մի բուռն ժողովուրդ՝ բոէրները մինչև օրս շարունակում են հերոսական կռիւն իրենցից հարիւրապատիկ բազմաթիւ, զօրեղ և հարուստ անգլիական ազգի դէմ. խիղճը կռւում է կոպիտ ոյժի դէմ, ազատութիւնը՝ բռնութեան դէմ, հոգին՝ մարմնի դէմ, ու մինչև օրս բոէրներին չկարողացան ընկճել անգլիացիները և, Աստուծոյ ողորմութեամբ, երբէք էլ չպիտի կարողանան։

Անգլիացիների դէմ բոէրների մղած կռուին հետեւելով՝ մարդ չէ իմանում, թէ ինչ բանի վրայ զարմանայ. զարմանայ անգլիական մեծ ազգի աւելի մեծ արդարութեան վրայ. զարմանայ անգլիական ազգի ահագին էներգիայի և անհատնում հարստութեան վրայ, որ կարողանում է մեծ ձախորդութեան մէջ իսկ հազար միլիոններ ծախսել Հարաւային Աֆրիկայի պատերազմի համար և միևնոյն ժամանակ աշխարհիս ամեն կողմում վրայ հասնել. զարմանայ անգլիական դիպլոմատիայի ճարպիկութեան վրայ, որ մինչև օրս, նեղն ընկած միջոցին իսկ, կարողանում է մեծ տէրութիւններին միջամտութիւնից հեռու պահել. թէ՝ զարմանայ բոէրների քաջութեան, բոէր կանանց անձնուիրութեան և մի բուռն ժողովրդի՝ բոէրների անսպառ ոյժի վրայ, որ կարողացել է երկու տարի շարունակ ջարդել թշնամուն, և ոչ արիւնից, ոչ կրակից, ոչ ջրից չէ վախենում և հետևաբար կռւում է հայրենիքի ազատութեան համար։

Բոէրները փողով հայրենիք առնող ու ծախող չեն և չեն էլ շահագործում ոչ մի սուրբ զգացմունք. հաւատը և սէրը ներշնչում են նրանց այն հոգին, որ երկաթ է հալեցնում։ Գաղտնիքը դրա մէջն է։ Այժմ խօսում են արդէն հաշտութեան մասին։

ԲՐՈՆԿՈՆ

—

Վերափառ Կաթողիկոսը երկուշաբթի, յուլիսի 23-ին, Ալէքսանդրապոլից հաճել է վերադառնալ ս. Էջմիածին։

— Փիլոքսերային կոմիտեի հրահանգիչ պ. Օահկեան Ախալքալաքի գաւառից զեկուցանում է, որ գտնուած է հացի մլուկը ոչնչացնող պարազիտ։ Միջոցներ են ձեռք առնուած հացի բզէզը ոչնչացնելու համար։ Հաճարի և գարու բերքն ապահովուած է։

— Թիֆլիսի քաղաքային դպրոցական յանձնաժողովը մի զեկուցում է պատրաստել Թիֆլիսում տեխնիքական միջնակարգ դպրոց բանալու։ Այդ զեկուցումը կըքննուի քաղաքային խորհրդի աշնան նիստերից մէկում։

— Մեր թղթակից պ. Ար. Աբեղեանը Մարբուրգից մեզ գրում է, որ այս օրերս լոյս է տեսել դոքտոր Կարստի, հայկաբանութեան համար կարևոր նշանակութիւն ունեցող, «Historische Grammatik des Kilikisch-Armenischen» աշխատութիւնը, որի ուսումնասիրութիւնը խոստանում է ուղղել մեզ շատով։

—«Ս. Պետ.Վեդ»-ն լսել է, որ ռուսաց համալսարաններում ընդունուող հրէաների թիւը կըստիմանափակուի երեք տոկոսով, բացի Մոսկուայի համալսարանից, ուր հրէաների ընդունելութիւնը բոլորովին պիտի դադարեցնուի։

—Կարծւում է, որ երկաթուղու Թիֆլիս կայարանի ապրանքների պահեստներում յուլիսի 26-ի գիշերը պատահած հրդեհը ձգուած է գիտամբ, կատարուած գողութիւնները ծածկելու համար։ Պահապաններից երկու հոգի, որոնք խիստ այրուածքներ էին ստացել, մեռան հետևեալ օրն։ Այրուած են մեծ մասամբ թանկագին ապրանքներ, այնպէս որ վնասը մի միլիոնից աւելի են հաշւում,

— Երևանում հիմնուող փոխադարձ վարկի ընկերութեան կանոնադրութիւնը հաստատուած է։

— Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐՈՂԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ *)

—

Միխայիլ Իւրևիչը շատ իրաւացի գրել է իւր մասին—«ես տանջանքի զաւակ եմ»...

«Ես իմ մէջ ամփոփում եմ երկու մարդ, —ասում է նա մի ուրիշ տեղ,—մէկն ապրում է—այդ խօսքի ընդարձակ նշանակութեամբ, միւսը քնում ու գատափետում»։ Եւ ապա խոստովանում է՝ «եթէ ես երբ և իցէ ուրիշի անբախտութեան պատճառ եմ եղել, ինքս էլ ոչ պակաս ինձ զգացել եմ անբախտ»...

Նա կամենում է իւր մահուանից յետոյ այս աշխարհում մի «բարի» անուն թողնել, իսկ այդ անունն ով կարող է տալ, եթէ ոչ հասարակութիւնը։ Հասարակութեան անդամ է նա փափագում դառնալ, նա ուզում է մտնել իրեն շրջապատողների «ընկերութեան» շրջանը։ Բայց դառն փորձից յետոյ կանգ է առնում, մտածելով՝

Предо мной
Блеститъ надменный, глупый свѣтъ
Съ своей красивой пустотой!
Ужель я для него писалъ?
Ужели важному шуту
Я вдохновенье посвящалъ,
Являя сердца полноту?

Խաղաղ անխռով ժամերը ձանձրացնում են բանաստեղծին.

Жизнь скучна, когда боренья нѣтъ...

և

Что безъ страданій жизнь поэта?

Նա ընկնում է կեանքի ալէկոծ ծովը. ահեղ ալիքներում է նա որոնում և՛ բախտ, և՛ հանգստութիւն, որ յետոյ դառնացած բացականչի՝

А онъ мятежный проситъ бури,
Какъ будто въ бурахъ есть покой!..

Սակայն ինչում է և կամ ինչից Լերմոնտովի անաջողութիւնների, կասեմ աւելի՝ տանջանքների պատճառը։

Զրջանը մեծ ազդեցութիւն է ունեցել մանուկ Միշելի վրայ ու խորը ծիլեր է գցել նրա բնաւորութեան զարգացման մէջ։ Զրջապատած բարեկամներով և ազգակիցներով, որոնցից փայփայանք և փաղաքշանք է միմիայն տեսել, նա սեպհականացրել է իրեն շատ կապրիզներ։ Բայց որովհետև այդ շրջապատողները, նամանաւանդ Ելիսաւետա Ալէքսէէնան, մանկան ոչ մի ցանկութեանը հակառակ չէին գնում և նրա ամեն մի խօսքը սրբութեան պէս էին պաշտում, ուստի սեպհականացրած կապրիզները գնալով աւելի խորն արմատանում են։ Նա տեսնում է, որ ամենքն իրենով են զբաղուած, իրեն կուռքի պէս են պաշտում, —և ինքն էլ սովորում է պաշտել իւր անձը... Իսկ այստեղից լայն ճանապարհ է բացւում դէպի եսասիրութիւն...

Մեծանալով՝ նա ուրիշներից ևս միևնոյն ուշադրութիւնն է պահանջում դէպի իւր անձնաւորութիւնը. նա չի կարող մարսել, երբ որ իրենով չեն հետաքրքրւում, իրեն չեն գերադասում «ուրիշներից»։ Նա մի քանի անգամ փորձեր է անում ուշադրութիւն գրաւելու. բայց այդ փորձերն անցնում են ի զուր. հասարակութիւնը ոչինչ աչքի ընկնող բան չի տեսնում նրանում։ Իսկ ոմանք էլ չեն կարող առանց ժպիտի նայել, երբ որ Միշելը մտնում է իրենից «մեծերի» շրջանները «մեծ երևալու» նպատակով։

Պոէտն անբաւական է «անբարտաւան» հասարակութիւնից. նա այսուհետև ատելու է մարդկանց, որովհետև «նրանց հոգին աւելի սառն է, քան ալիքները»... Նրանք չուզեցին հասկանալ օր պակաս զարգացած պատանուն, չուզեցին յարգել նրա սրտի պահանջները.

Не могли понять его печали,
Не могли восторговъ раздѣлить..

Այդ անբաւականութիւնը մարդկանցից, այդ ատելութիւնը դէպի հասարակութիւն օրէ ցօր բազմապատկւում էր։ Կեանքը, շրջապատող մթնոլորտն էլ իւր կողմից—էգօիզմի, դէպի ուրիշի ցաւն ու արտասուքն անտարբերութիւն քարոզող դասերով աւելի էր նպաստում այդ բանին։

Բանաստեղծի հոր ու մեծ մօր միջև ծագած խռովութիւնները շատ ծանր տպաւորութիւն են թողնում նրա զգայուն բնաւորութեան վրայ —Այդ ընտանեկան դրամը նա պատմել է «Menschen und Leidenschaften» երիտասարդական պիեսում։ Եւ այստեղ Նիկոլայ Միխայլովիչի անձնաւորութեան մէջ հեղինակն առաջ է բերել իւր հօրը, իսկ Մ. Ի. Դրոմովան բանաստեղծի մեծ մօր ճշգրիտ պատկերն է։

1830 թ.-ի գարնանը «ազնուականների պանսիօնը», որտեղ Լերմոնտովը սովորում էր, գիմնազիստի իրաւունքներ է ստանում, և Ելիսաւետա Ալէքսէէնան շտապում է վերցնել իւր թոռն այդ պանսիօնից։ Ամառը նա անց է կացնում Արսէնևայի եղբօր կալուածքում, որտեղ և սիրահարւում է օր. Կատեա Սուշկովայի վրայ. Բանաստեղծից մի երկու տարով մեծ օրիորդը շատ թեթև է վերաբերւում Միշելի զգացմունքներին։ Անկեղծ խօսքին նա պատասխանում է անպատկառ ծաղրով։ Եւ ինչպէս կարող է նա, արդէն հարսնացու-օրիորդ, առանց ծիծաղի լսել 16 տարեկան պատանու սիրային խոստումները, որի մասին կարդում է «неуклюжій, косоланый мальчикъ лѣтъ 16 ти или 17-ти»...

Լերմոնտովը ծանր անպատուած է, բայց նա համբերութեամբ կըսպասի ամիսներ, տարիներ, որ մի օր պատժի ու խիստ պատժի այդ «летучая мышь»-ին, ինչպէս յետոյ նա անուանելու է M-elle Cathèrine Souchkoff-ին։

Այդ սիրային էպիզոդն էլ բանաստեղծի համար մի դաս էր, որն աւելի ևս խրում է նրան էգօիզմի անդունդը։ Նա բացարձակ տեսնում է, որ մարդկային սրտի ամենանուիրական զգացմունքն անգամ «ես»-ի ձեռքին շատ տգեղ մի խաղալիք է դարձել... Եւ հիասթափուած, կայրացած բանաստեղծը բացականչում է՝

Пустья кого-нибудь люблю,—
Любовь не красить жизнь мою:
Она, какъ чумное пятно
На сердцѣ, жжетъ— хотя темно...
Враждебный силою гонимъ,
Я тѣмъ живу, что смерть другимъ.

Բայց նա չի բաւականանալ այդ կտրկտոր բացականչումներով։ Նա կըստեղծի ապա մի շարք գրուածքներ, որտեղ կամփոփի այն ամենն, ինչ որ տեսել ու լսել է տարիների ընթացքում, որ յետոյ դայ այն եզրակացութեան, թէ

Жалокъ міръ!
Въ немъ каждый средь толпы забытъ
и сиръ,
И люди всѣ къ ничтожеству спѣшатъ...

—

«Դեմ» վիպասանութեան մէջ Լերմոնտովն արտայայտել է իւր բոլոր համոզմունքներն ու տպաւորութիւնները, որ ստացել է նա իւր կարճատև կեանքից։ Հենց դրա համար էլ հեղինակն այնքան սիրում էր այդ գրուածքը։ Մօտ տասն և մէկ տարի (1829—1840 թ.), ուրեմն՝ իւր գրական գրեթէ ամբողջ կեանքը—նա անխոնջ աշխատել է նրա վրայ, փոփոխութիւնների ենթարկել, մշակել։

Այդ պոէման՝ իւր ներքին իմաստով՝ երեք մասից է բաղկացած, և նրա ամեն մի մասը մի շրջան է բանաստեղծի հոգևոր կեանքի, հոգևոր աշխարհի զարգացման ընթացքում։

«Ծխրագին դեղը, արտաքսած հոգին» իւր ընկերակիցներից բաժանուած, ապրելով մենակութեան մէջ, ակամայ յիշողութեան է դիմում, և նրա երևակայութեան շուրջը խմբւում են անցած գնացած քաղցր օրերը,

Когда въ жилищѣ свѣта
Блисталъ онъ чистый керувимъ...

Այն ժամանակ նա «հաւատում էր և սիրում», «не зналъ ни злобы, ни сомнѣнья», որովհետև դեռ չէր մտել «աշխարհ», և նրան ծանօթ չէր կեանքի աստառը ևս։ Իսկ այժմ նա այդ կեանքի և՛ երեսը, և՛ աստառն է տեսել,—ուստի կատի իւր առաջուայ ցնորքներն ու այդ կեանքը, շրջապատող մթնոլորտը միջոց կըդարձնի իւր անձը բաւականացնելու, իւր «ես»-ին ծառայելու։ Այդպէս պէտք է հասկանայ նա ապրելու և՛ իմաստը, և՛ բախտը։ Նա աչք է գցում ուրիշի սիրոյ վրայ, ուզում է «յաղթել» այդ «ուրիշ»-ին, որ տիրանայ օրիորդի սրտին (տես վիպասանութեան առաջին նմուշները, որ վերաբերում են 1829 թ.-ին)...

Դրանով փակւում է պոէմայի առաջին մասը։ Մենք տեսնում ենք, որ դեմի բընաւորութիւնը որոշ ուղղութիւն արդէն ստացել է, նա էգօիստ է։ Եւ ապագան հանգամանքների շնորհիւ՝ կամ կըստացնի, կամ էլ կըմեղմացնի այդ ուղղութիւնը։

*) Տես «Նոր-Դար» № 118.

Նորաշէն եկեղեցու միաբան տէր-Դաւիթը, որի դէմ շատ են գանգատւում, ս. սինոդի կարգադրութեամբ պատժի է ենթարկուած։ Այդ քահանան Բագու է ուղևորւում և այնտեղի հայոց գերեզմանատանը մեռելոցին գերեզմաններն օրհնում։ Ուրիշ տեղեր էլ արդիւնք որոնող քահանան բնականաբար պէտք է իրեն դէմ յարուցանէր տեղւոյն քահանաներին։

— Ներկայումս պատրաստւում են 1, 2, 3 և 5 կոպէկանոց պոստային Նոր ձեւի մարկեր։

—«Նով. Օր.» հաղորդում է, որ Թիֆլիսի առևտրական դպրոցի հոգաբարձութեան նախագահը դիմել է ֆինանսների մինիստրութեանը թոյլտուութիւն խնդրելով վաճառականական ուսումնարան բանալու Թիֆլիսում առաջիկայ աշնանը։ Ուսումնարանի ծրագիրը վաղուց արդէն ներկայացուած է մինիստրութեանն ի հաստատութիւն։ Վաճառականական ուսումնարանը պէտք է լինի հասակաւոր աշակերտների համար։

— «Adverul»-ը պաշտօնական աղբիւրների հիման վրայ հաղորդում է, որ Ռումինիայում ապրող օտարադաւանութիւն են ընդունել 5523 հոգի, որոնցից 11 հոգի հայ են։

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ՍԻՄՖԵՐՈՊՈԼԻՑ.—Այս օրերս Նալթայում վախճանուեց սիմֆերոպոլցի հարուստ հայ Ա. Օ. Սպենդիարով, որը, ինչպէս ասում են, բերանացի կտակել է իւր որդուն Սիմֆերոպոլում հայ աղքատների համար ձրի բնակարաններ կառուցել։ Տեղիս ռուս թերթերի ասելով, թաղումից մի քանի օր յետոյ, հանգուցեալի որդին և մերձաւորները յիշեալ նպատակով յատկացրել են 34 հազար բուբլի։ Հանգուցեալը թողել է $1^1/_2$—2 միլիոնի չափ կարողութիւն։

—

ՆՈՒԽՈՒՑ.—Յուլիսի 11-ին, երեկոյեան ժամը 7-ին, Մարգարեանի գործարանի ներքնայարկում երկոյթ տեղի ունեցաւ, որի ընթացքում ներկայացրին և երկու վոդեվիլ։ Երկու վոդեվիլները ներկայացնելուց յետոյ, ինչ-որ բանի պատճառով, ներկաներից մի քանիսն իրար վիրաւորեցին խօսքով։ Դրա հետևանքն այն եղաւ, որ գործն այժմ գտնւում է քննչի մօտ։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Յարգոյ պ. խմբագիր.

Ի նկատի ունենալով, որ մի քանի լրագրներ տեղեկութիւններ էին հաղորդել, թէ ցուցահանդէսը բացուելու է որոշուած ժամանակից ուշ, խնդրում եմ ձեզ, յարգոյ տէր, չմերժէք կարգադրել ձեր լրագրի ժամակայ համարում հրատարակելու սոյն նամակս ի գիտութիւն ընդհանրութեան, որ կովկասեան յորելեանական ցուցահանդէսի բացումը նշանակուած է օգոստոսի 20 ին և թէ ոչ ցուցահանդիսի բիւրոյում, ոչ կարգադրիչ մասնաժողովի մէջ խնդիր չի յարուցուել ցուցահանդէսի բացման օրը փոխելու մասին։

Խնդրում եմ տեղական նաև միւս թերթերին արտատպել այս նամակս։

Յուցահանդիսի կոմիսար՝

Իշխ. Ի. Անդրոնիկով

ԴԱՐՁԵԱԼ ԵՂԻՇԷ ՎԱՐԴ. ՄՈՒՐԱԴԵԱՆԸ

(Նամակ խմբագրութեան)

—

Յարգելի խմբագիր,

Այս վերջին ժամանակներս Ատրպատականի թեմակալի հարցը շատ սուր կերպարանք է ստացել։ Եղան ընտրութիւններ, հրաժարականներ և վերջապէս ընտրուած համարուեց Եղիշէ վարդապետ Մուրադեան։ Նրա մասին եղան շատ թեր և դէմ կարծիքներ, որոնց ես հետևում էի շատ հետաքրքրութեամբ, մանաւանդ, լինելով կարսեցի, շատ մօտիկ ծանօթ եմ նրա գործունէութեան, որի մի մասի վրայ լոյս սփռեց ձեր պատուական թերթի № 110-ում պ. Դ. Տ.։ Քանի որ Ատրպատականի թեմի ժողովրդի համար անչուշտ կարևոր նշանակութիւն ունի, իմանալու թէ ինչ մարդ է իւր նոր առաջնորդը, յուսով եմ, որ չէք զլանալ նաև մեր տուած տեղեկութիւնները ի լոյս ընծայել, որոնք կրլինին լրացուցիչ տեղեկութիւններ պ. Դ. Տ.-ի յօդուածի և կրվերաբերին հայր Եղիշէի Կաղզուանում կատարած սխրագործութեանց։ Գուցէ սրանով որոշ չափով ծառայած կըլինիմ մոլորուած ատրպատականցիներին, որոնք, շլացած մի քանի սուտ և անհիմն լուրերից, իրենք իրենց ոտով գնում են ընկնելու մի թակարդի մէջ, որից ապագայում շատ դժուար կըլինի դուրս գալ։

Իմ այդ ամենահասարակ պարտականութիւնս կատարելու համար ես դիմեցի Կաղզուանում բնակուող մի քանի անձերի, որոնցից ստացայ գրաւոր (հայր Եղիշէի ձեռքով գրուած) դոկումենտներ, որոնց հետ ցանկանում եմ ծանօթացնել ընթերցող հասարակութեան։

Սկսենք Կաղզուանի եկեղեցու շինութիւնից։

Ինչ որ պ. Դ. Տ. յիշում է Կարսի վերաբերմամբ, համարեա թէ նոյնը կատարուել է այստեղ։ Հայր Եղիշէն Նորակառոյց եկեղեցու շինութեան առթիւ գալով Կաղզուան՝ ամեն մի պաշտօն ամփոփել է իւր անձի մէջ. նա ճարտարապետ էր, գործակատար, բանուորի և վարպետի վարձ տուող և այլն և այլն...։ Բայց թէ ինչպէս է կատարել իւր ըստանձնած այդ պաշտօնները, մենք մէջ կըբերենք այստեղ մի քանի կէտեր այն հաշուեցուցակից, որ ներկայացրել է հայր Եղիշէն պ. Ջանփոլադեանին (Նորակառոյց եկեղեցին շինողին) և ստացել է փողերը. առաջ կըբերենք և այն ստացականների բովանդակութիւնը, որ տուել է Կաղզուանի երէցփոխ Զահինեանին, երկրորդ անգամ ստանալով նոյն դրամները. (թէ հաշուեցուցակը և թէ ստացականները գրուած են իւր ձեռքով)։

Հաշուեցուցակի մէջ կարդում ենք «№ 1. Փետրուարի 26-ին 1900 ամի վճարեցի եկեղեցու վարպետներին առաջին անգամ բերածս ժամանակ 17 ր.»։ Այդ միևնոյն դրամը հայր Եղիշէն ուեւլորդ չէ համարել ստանալու նաև երէցփոխից պաշտօնական գրութեամբ յ8 փետրուարի 1900 ամի № 34։

Մայիսի 9-ի հաշուեցուցակում կարդում ենք. «Ս. Էջմիածնից եկայ Կաղզուան քննելու Աղէկ Կարապետեանի կըտակի գործը. գնալ գալու ծախք եղաւ 24 ր. 80 կ.»։ Այդ նոյն ճանապարհածախսն ստացած է նաև երէցփոխից. «18 Նոյեմբ. № 119. ճանապարհածախս վասն քննելոյ զգործ կտակի Աղէկի Կարապետեանի 19 ր. 54 կոպ.»։

Խնդրեմ Ջանփոլադեան, Աղէկ Կարապետեանը կտակ է անում, հոգևոր կառավարութիւնը քննիչ է ուղարկում, կրկնաճանապարհածախսը քեզնից են պահանջում։ Արդեօք ինչ կապ ունի Նորակառոյց եկեղեցու շինութիւնն Աղէկի կտակի հետ, այդ գուցէ կարողանայ հայր Եղիշէն միայն բացատրել, իսկ մենք հասարակ մահկանացուներս անընդունակ ենք այդքան խրթին փիլիսոփայական հարցեր ըմբռնելու։

Սակայն շարունակենք թերթել հաշուեցուցակը. «սեպտեմբերի 13-ին Վահրամի գործով գնացի Տփխիս, որի ժամանակ ծախս եղաւ 107 ր.»։ Այդ մասին բարեշնորհ հայրը բացատրում էր, որ Վահրամին (Ջանփոլադեանի որդուն) իբրև թէ գիմնազիայից արձակել են և ինքը մեծ ծառայութիւն է մատուցել պ. Ջանփոլադեանին նորից ընդունել տալով նրա որդուն։ Բայց այժմ ինձ մօտ գտնուած դոկումենտից երևում է, որ պ. Ջանփոլադեանի որդուն երբէք գիմնազիայից չեն արձակել, ուրեմն և կարիք չկար միջնորդելու նրան նորից ընդունել տալու համար։ «Փայլուն մատաղից» զզուող ու գարշող վարդապետի պատկերը ցոյց տալու համար բառացի մէջ ենք բերում գիմնազիայի դիրեկտորի պատասխանը, որ գրել է ի պատասխան պ. Ջանփոլադեանի գրութեան, թէ յիբաւի իւր որդին արձակուած է եղել գիմնազիայից և ընդունուել Եղիշէ վարդապետի խնդրանքը։ «30-ն Նոյեմբերի։ Ձեր որդին Վահրամը երբէք գիմնազիայից չէ հեռացուել, հետևաբար և կրկին նրան ընդունելու համար ոչ ոքի միջնորդութեան կարիք չկար։ Ես ոչ մի վարդապետի չեմ տեսել և ով է նա չը. գիտեմ»։ Զարունակենք։ «Վճարեցի բընակարանի և ծառայի վարձ 55 ր., ս. Էջմիածին գնալիս ճանապարհածախս եղաւ 60 ր.» (հաշուեցուցակումն է)։ Նոյն փողերն ստացած է նաև Զահինեանից հետեւեալ պաշտօնական առաջադրութեամբ. «6 Նոյեմբերի 1900 ամի, № 168. Համաձայն բարձու հրամանի Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն հայոց № 1149, առաջադրում եմ անյապաղ վերադարձնել ինձ հետեւեալ ծախսերը. դէպի Էջմիածին և յետ 60 ր., բնակարանի և ծառայի վարձ 55 ր.»։ Սեպտեմբերի 7 ին հայր Եղիշէն ստանում է պ. Ջանփոլադեանից 136 ր., որից 60 բուբլին պիտի տար գլխաւոր վարպետին, 40 ր. պատ շարող վարպետին և 36 ր. հիւսն Ակրբին։ Այդպէս է երևում իւր ներկայացրած հաշուեցուցակից. բայց նա ուեւլորդ չէ համարում նոյն փողերն ստանալ նաև երէցփոխից, տալով ստացականներ. (հարկաւոր դէպքում պատրաստ եմ ներկայացնել բոլորը)։

Այսպիսի կրկնութիւններ անթիւ անհամար են, բայց չերկարացնելու համար բաւականանում եմ այսքանով. այսքանն էլ բնորոշում է հայր Եղիշէի պատկերը և բաւական բացատրում է, թէ ինչու հայր Եղիշէն սիրում է պաշտօնների «կենտրոնացումը» մի անձի մէջ։

Այսքանը նրա «անմեղաղաղէր» (!!!) յատկութիւնից։ Թէ ինչ կեանք է վարում նա—բոլորին յայտնի է, որքան յարգում է իւր կոչումը – այդ ևս յայտնի է, բայց նա չէ զլանում վիրաւորել նաև ժողովրդի նուիրական զգացմունքներն իւր արարքներով, օրինակ էք կամենում, —համեցէք։ Այժմս ամեն մի կրթուած աշխարհական իրեն չի թոյլ տալ «դաւուլ զուռնայով» քէֆ անել, որովհետև դա մի անվայել բան կըլինի. բայց մեր վերապատուելի հայր Եղիշէն չէր քաշւում նոյն իսկ վեղարով ու փառաջայով Կաղզուանի մէջ մասնակցել այդպիսի քէֆերի և սանալ նկատողութիւն տեղական ռուս հոգևորականներից, որը ոչ

Այդ ուղղութիւնը, որ «Դեւ»-ի առաջին մասում միմիայն թեթև կերպով է շօշափուած, աւելի փայլուն ներկերով առաջ է բերուած «Два брата»» դրամում գործող Ալէքսանդր Ռադինի անձնաւորութեան մէջ։

Մի ժամանակ բանաստեղծը բացարձակ երգում էր թէ՝

Живу для сердца своего...

Ալ. Ռադինն այն անձնաւորութիւններից է հէնց, որոնք յիրաւի ապրում են «իրենց սրտի համար»... Նա երբէք չի կարմրել արած քայլից, ինչքան էլ ստոր լինէր այդ քայլը։ Նա համոզուած է, որ մարդս իրաւունք ունի բախտ, երջանկութիւն պահանջելու կեանքից։ Բայց որովհետև այդ բախտը, այդ երջանկութիւնն ամենքն էլ վայելել չեն կարող, ուստի պէտք է անընդհատ կռուել, և ով որ աւելի ճարպիկ է, ուժեղ, նա էլ, ի հարկէ, յաղթող կըհանդիսանայ... Եւ Ալէքսանդրը կռուում է... հարազատ եղբօր դէմ...

Նա խլում է իւր եղբօրից նրա առաջին սէրը։ Վէրան չի կարողանում դիմանալ Ալէքսանդրի կրքոտ սրտի բարախումներին և գերւում է նրա գործ դրած միջոցներից։ Թշուառ կնոջ հրապուրուելն այն տեղն է հասնում, որ նա ստնակոխ է անում և ամուսնական սրբութիւնը...

—

«Два брата» դրամը գրուած է 1831 թ.-ին, երբ Լերմոնտովը 16—17 տարեկան պատանի էր։ Մօտ մի տարի է արդէն, որ նա Մոսկուայի համալսարանի ուսանող է...

Սակայն չի հաւանում Լերմոնտովը և համալսարանի մթնոլորտը, և շատ երկար չի մնում նրա պատերում։ Պրոֆեսորների պեդանտիզմը զզուելի է նրան։ Նա միշտ, կարծես, միջոց է որոնում խայթել լուսաւորութեան այդ «հովիւներին»։ Ծագում են մի քանի խռովութիւններ, և Լերմոնտովն ստիպուած է հեռանալ Մոսկուայի alma mater-ից։

Տաքը նրան Պետերբուրգ է տանում։ Բայց այստեղ Միխայիլ Իւրևիչը, հակառակ Աբսէնևայի ցանկութեան՝ փոխում է իւր կարիերը։ 1832 թ. նոյեմբերի 14-ին «школа гвардейскихъ юнкеровъ» Լերմոնտովին գցում է իւր սաների թիւը։

Պետերբուրգի «զինուորական կեանքը» այն ժամանակ մեծ շռայլութիւնների, անբարոյականութիւնների մի կրկէս էր։ Ամեն մարդ իւր զուարճութեան, իւր բերկրանքի համար էր ապրում միայն։ Եւ բանաստեղծն ընկնում է այդ ալէկոծ ծովը... Մի կողմից—բարոյապէս ընկած ընկերները, միւս կողմից—բանաստեղծի բնաւորութեանը յատուկ, նրա բնաւորութեան մէջ բուն դրած էգօիզմը, որ դրդում էր Նրան ամենքից «բարձր կանգնել»,—այժմ բոլորովին գերելու են խեղճ երիտասարդին։

Նկարագրելով իւր սրտագին բարեկամներից մէկին՝ Մարիա Ալէքսանդրովնա Լուցուխինային՝ ամառը բանակում կրած նեղութիւնները, նա աւելացնում է «Մի բան ինձ խրախուսում է, դա այն է, որ ես մի տարուց յետոյ օֆիցեր եմ։ Եւ այն ժամանակ. այն ժամանակ ..Ի՜նչ կեանք եմ վարելու... Ցիմարութիւններ, չարութիւններ և շամպայնով համեմած պէէզիա»... «Ինձ այժմ պէտք են,—շարունակում է նա,—զգայարանական զուարճութիւններ և այնպիսի երջանկութիւն, որ կարելի է շօշափել և որը փողով են գնում.։ Այդ երջանկութիւնը պէտք է տիրանայ իմ զգացմունքներիս միայն, իսկ հոգիս պիտի վայելէ անշարժութիւն և անդորրութիւն»...

Եւ ինքն ըստ ինքեան արդէն հասկանալի է, թէ ինչ կեանք պէտք է վարի այդպիսի ծրագրներով ներշնչուած երիտասարդն օֆիցերի էպոլետներն ուսերին դնելուց յետոյ։—«Ես այժմ այցելում եմ բօ-մոնդը, որ ինձ նկատեն,—գրում է նա միևնոյն բարեկամին 1834 թ.-ի դեկտեմբեր ամսին՝ կորնետի աստիճան ընտանալուց մի ամիս անցած։—Ախ, ես աշխատում եմ գրաւել այս և այն գեղեցկուհու ուշադրութիւնը, որ յետոյ, գերելով Նրան, ծաղրեմ Նրա զգացմունքները»։

Բարձր կարգի հասարակութեան մէջ փայլելու ձգտումները հանգիստ չեն տալիս բանաստեղծին... Հասարակութիւնն էլ դժբախտաբար քարասիրտ է. նա տանց այն էլ առատ չի ցրում իւր ծափահարութիւնները։ Երիտասարդ կորնետի ինքնասիրութիւնը տանջւում է։ Սակայն նա չի վհատւում։ Նա կըկռուի և՝ իւր նպատակին հասնելու համար՝ ոչ մի միջոցի առաջ կանգ չի առնիլ... Թող նրա վարք ու բարքն ստոր, շռայլ անուանեն, միայն թէ նկատեն Նրան։ Առայժմ այդ է փափագում բանաստեղծը...

Ընթերցողը տեսնում է, որ Լերմոնտովի հոգեկան զարգացումը մտել է նոր շրջան։—Առաջ նա համոզուած էր, թէ աշխարհում ամեն բան էգօիզմի վրայ է հիմնուած, թէ մարդիկ էգօիստներ են. և դու էլ պէտք է եսասէր լինես, որ խեղճ չմնաս ուրիշների ձեռքում։ Դա մեր բանաստեղծի ներքին կեանքի առաջին շրջանն էր, որ և արտադրուած է արևելեան վիպասանութեան առաջին մասի, «Два брата» պիեսի և 30—31 թուականներին վերաբերեալ մի քանի մանր գրուածքների մէջ։ Իսկ այժմ նրա վրէժխնդիր սիրտը զոհեր է պահանջում։ Հասարակութիւնը սառնութեամբ վերաբերուեց Միխայիլ Իւրևիչին, չծափահարեց Նրան,—ուրեմն նա պիտի պատժուի...

Բանաստեղծը սիրային խաղեր է կապում այս և այն օրիորդի հետ, որպէս զի խանգարի նրա ամուսնութիւնը մի ուրիշի հետ, և երբ սէր է, նա ինքն էլ, մնաս բարև տալով, թողնում է օրիորդին յուսահատութեան և հիասթափման մէջ։ «Նա,—ինչպէս պատմում է բանաստեղծին ժամանակակից մի կին, —գրաւում էր կանանց, որ յետոյ հեռանայ նրանցից, խորտակելով նրանց զուր յոյսերը»։ Այդ ամենը մեծ «զուարճութիւն» էր պատճառում բանաստեղծին։

Այդ տեսակ զոհերից մէկն էլ եղաւ M-lle Cathèrine Souchkoff. .Օրիորդն այդ ժամանակ նախանձելի դիրք ունէր բարձր կարգի հասարակութեան մէջ... Նա ընդհանուր ուշադրութեան առարկայ էր։ Լերմոնտովն շտապում է նորոգել իւր ծանօթութիւնն օրիորդի հետ։ Նա այժմ «16 տարեկան երեխայ» չէ, ինչպէս առաջ նրան անուանել M-lle Cathèrine. Նա այժմ փոքուած, կեանքի համը ճաշակած կորնետ է, որի աչքերից այնպիսի «ինքնավստահութիւն» է թափւում։—«Չէր կարելի առանց շփոթման նայել այդ աչքերին»,—պատմում է յետոյ ինքը օրիորդը իւր «Յիշողութիւններ»ի մէջ։ Իւր բոլոր հմտութիւնը գործ է դնում երիտասարդ կորնետը լիովին գերելու օրիորդի սիրտը։ Դրա պատճառը նա ինքն էլ խոստովանում է շատ պարզ։ «Ես հասկացայ,—գրում է նա իւր նամակներից մէկում,—որ եթէ կարողանամ գրաւել այդ օրիորդի ուշադրութիւնը, ուրիշներն էլ ինձնով կըհետաքրքրուեն, սկզբում լոկ հետաքրքրութիւնից, իսկ յետոյ—մրցելու ցանկութիւնից դրդուած»։ Եւ երբ բանաստեղծը հասնում է իւր նպատակին, երբ օրիորդը բացարձակ արտայայտում է իւր համակրութիւնն, իւր զգացմունքները դէպի Լերմոնտովը, վերջինն սկսում է ծածուկ ծանօթութիւններ կապել ուրիշ օրիորդների հետ, Նրա դէմ բամբասանքներ հընարել, և այլն...

Սակայն այդ «արշաւանքներն» էլ վերջապէս ձանձրացնում են Լերմոնտովին։ Նա տեսնում է, որ յաղթութիւններ և զոհեր շատ, բայց բախտ, երջանկութիւն, այն, ինչ որ Նրա միակ նպատակն է եղել միշտ, որին փափագելով միայն նա ծածկուել է քանի՜ քանի՜ դիմակներով, —ճշմարիտ բախտ, բաւականութիւն տուող երջանկութիւն—չէր։ Եւ ակամայ կանգ է առնում բանաստեղծն ու հարցնում ինքն իրեն՝—ապա ինչումն է ուրեմն իմ բախտը... Նա «պատրաստ է այլ կեանք սկսել»... Նրան այլևս չեն գրաւիլ բօ-մոնդում փայլելու ձգտումները, ոչ էլ նա կըպահանջի այդ «արիստոկրատ հասարակութիւնից» ուշադրութիւն և ծափեր։ Նրա համար միևնոյն է այժմ—կընկատեն նրան արդեօք այդ «ծաղրածուները», կարժանացնեն նրան իրենց պատուին, յարգանքին... Եւ եթէ բանաստեղծը երբեմն մասնակցի էլ նրանց կեանքի հոսանքին, այդ կանի նա միևնոյն անտարբերութեամբ, կանի հին սովորութիւնից, բնազդումից դրդուած... Միխայիլ Իւրևիչն աւելի քան երբ և իցէ պարզ տեսնում, հասկանում է այն կեանքի ունայնութիւնն ու դատարկութիւնը, որն այնքան այժ, էնէրգիա, ֆիզիկական առողջութիւն և հոգու խաղաղութիւն է խլել նրանից...

(Վերջը միւս անգամ)

Յովհաննէս Շահ-Նազարեան

Մոսկուա

վարդապետի չեմ տեսել և ով է նա չը. գիտեմ»։ Զարունակենք։ «Վճարեցի բընակարանի և ծառայի վարձ 55 ր., ս. Էջմիածին գնալիս ճանապարհածախս եղաւ 60 ր.» (հաշուեցուցակումն է)։ Նոյն փողերն ստացած է նաև Զահինեանից հետեւեալ պաշտօնական առաջադրութեամբ. «6 Նոյեմբերի 1900 ամի, № 168. Համաձայն բարձու հրամանի Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն հայոց № 1149, առաջադրում եմ անյապաղ վերադարձնել ինձ հետեւեալ ծախսերը. դէպի Էջմիածին և յետ 60 ր., բնակարանի և ծառայի վարձ 55 ր.»։ Սեպտեմբերի 7 ին հայր Եղիշէն ստանում է պ. Ջանփոլադեանից 136 ր., որից 60 բուբլին պիտի տար գլխաւոր վարպետին, 40 ր. պատ շարող վարպետին և 36 ր. հիւսն Ակրբին։ Այդպէս է երևում իւր ներկայացրած հաշուեցուցակից. բայց նա ուեւլորդ չէ համարում նոյն փողերն ստանալ նաև երէցփոխից, տալով ստացականներ. (հարկաւոր դէպքում պատրաստ եմ ներկայացնել բոլորը)։

Այսպիսի կրկնութիւններ անթիւ անհամար են, բայց չերկարացնելու համար բաւականանում եմ այսքանով. այսքանն էլ բնորոշում է հայր Եղիշէի պատկերը և բաւական բացատրում է, թէ ինչու հայր Եղիշէն սիրում է պաշտօնների «կենտրոնացումը» մի անձի մէջ։

Այսքանը նրա «անմեղաղաղէր» (!!!) յատկութիւնից։ Թէ ինչ կեանք է վարում նա—բոլորին յայտնի է, որքան յարգում է իւր կոչումը – այդ ևս յայտնի է, բայց նա չէ զլանում վիրաւորել նաև ժողովրդի նուիրական զգացմունքներն իւր արարքներով, օրինակ էք կամենում, —համեցէք։ Այժմս ամեն մի կրթուած աշխարհական իրեն չի թոյլ տալ «դաւուլ զուռնայով» քէֆ անել, որովհետև դա մի անվայել բան կըլինի. բայց մեր վերապատուելի հայր Եղիշէն չէր քաշւում նոյն իսկ վեղարով ու փառաջայով Կաղզուանի մէջ մասնակցել այդպիսի քէֆերի և սանալ նկատողութիւն տեղական ռուս հոգևորականներից, որը ոչ

միայն պատիւ չէ բերում հայը Եղիշէին, այլև հասայն ազգին։

Ահա ձեզ մի հոգևորականի պատկեր, որը կոչուած է ժողովրդի առաջնորդ լինելու...*)

Սարգիս Տէր-Մելքիսեդեկեան

Կաղզուան, 13 յուլիսի

ԴԱՐՁԵԱԼ ՊԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

(Նամակ խմբագրութեան)

—

«Նոր-Դար»-ի № 94-ում հրատարակուած նամակիս առթիւ պատուարժան խմբագրութիւնը երկու առաջնորդող յօդուած էր նուիրած նոյն թերթի №№ 95 և 96-ում, խնդիրը քննելով երկու տեսակէտից—ա) անհատական ձեռնարկութիւն և բ) արժանապատուութիւն։

Առաջին հարցը, որի մասին «Նոր-Դար»-ի պատուարժան խմբագրութիւնն ուրիշ անգամ էլ ցանկութիւն յայտնած էր տեղեկութիւն ստանալ, այն է թէ ում կողմից է կառուցուելու Պարիզի հայոց եկեղեցին,—մասնաւոր անհատի թէ հասարակական փողերով։

Պարիզի մէջ հայոց սեպհական եկեղեցի ունենալու հարցը նոր չէ. և բոլոր Պարիզ այցելողներ տեսած են անշուշտ, թէ այժմեան մատրան գաւթում 1898 թուից ի վեր զետեղուած է հասարակ փայտից մի փոքր արկղիկ, որի վրայ գրուած էր (որ քիչ ժամանակ է չի երևում)—«Ի շինութիւն Փարիզու հայկական եկեղեցւոյ». հետևաբար նա շինուելու է հանգանակութեամբ, հասարակական փողերով. և բաւական գումար էլ հաւաքուած է արդէն։ Այս հանգանակութեան մասնակցած են ամեն երկրից հայեր մեծ կամ փոքր գումարներ նուիրելով։ Արդ՝ իրաւունք չունինք պահանջելու որ փոխանակ մեծածախս եկեղեցու կառուցման, համեստ չէնքով մը գոհ մնանք և աւելորդ փողերը յատկացնենք ուրիշ ոչ նուազ կարևոր պէտքերի։

Երկրորդ հարցը, որ իմ անձին ևս կը պատկանի, այն է թէ «Նոր-Դար»-ին ուղղած նամակիս մէջ յայտնած «լոգիկա» յովս ազգային արժանապատուութիւնն իբր թէ ոտնակոխ եմ արած։ Քա՜ լիցի, որ այն տեսակ ստորին ու պարսաւելի մի գաղափար մտքիցս անցուցած լինիմ. նոյն իսկ պախարակած եմ այն պարոնները, որոնք օգտուելով ազգի ներկայ դրութիւնից՝ խաչագողութիւններ են արած այս ու այն կերպով։ Բայց իրողութիւնն այն է, թէ—առանց խօսելու Տաճկաստանի մէջ անպատսպար մնացած հաղարաւոր որբերի մասին—մենք ունինք Պարիզում աղքատ ուսանողներ, ցնցոտիներ հագած թափառաշրջիկ ազգայիններ, հիւանդանոցների մէջ տառապող եղբայրներ, փողոցներում մուրացող հայեր, ֆրանսիացիներից փոխ դրամ ըստացող և չտուող գրագէտներ, որոնց ամենայն օր ականատես է ֆրանսիացին և հետևցուցած, թէ հայոց ազգն «աղքատ է, ողորմութեան կարօտ է», ուստի նրան պէտք է օգնել նիւթապէս։ Այս պարագան և մանաւանդ յիշեալ թղթակցութեանս մէջ չակերտների մէջ ամփոփած—հայոց ազգը «ողորմութեան կարօտ է» բառերը պէտք էր ուշադրութեան առնել պատ. խմբագրութիւնդ, նկատելով որ այդ չակերտների մէջ առնուած բառերն ապացուցանում են, թէ նրանք մի այլ անձնաւորութեան խօսքերն են, այն տեսակ անձնաւորութեան, որ դժբաղդաբար նոյն համոզումն է կազմած մեր մասին։ Ճիշտ այս համոզմամբ է որ մի քանի ֆրանսիացիներ կազմած են այստեղ «Հայ ուսանողներին օգնող ընկերութիւն», որ դեռ գոյութիւն ունի։ Ահա այս ճշմարտութիւններն են, որ տեղի տուած են այն աննպաստ համոզման, որի պատճառը մենք ենք, մենք, հայերս, որ չգիտենք ինչ է նշանակում ազգային արժանապատուութիւն և դիմում ենք անում օտարին, փող, նիւթական օգնութիւն խնդրելու նրանից մեր աղքատների, ուսանողների և որբերի համար (Ուրիշ հարց է, թէ օտարներ ինքնաբերաբար ցանկութիւն են յայտնում նպաստելու)։ Այսպիսով մեր անունը «լալկան» հանած ենք ամբողջ Եւրոպայի առջև։ Կը ճանաչեմ մի ինչ որ «ուսանող», որ նամակներով ամեն տեղ (նոյն իսկ հրէաներին) դիմում է արած և օգնութիւն խնդրած։ Ուրիշ «ուսանող»ներ օտարի հիւրանոցում ամիսներով նստած, օտարի ճաշարանում շաբաթներով ճաշած և առանց մի կոպէկ իսկ վճարելու փախած անյայտացած են։

Եւ երբ օտարը մեր մասին վատ, անպատշաճ կարծիք է ունեցել, ով է մեղաւորը։ Ուրեմն տեսնում էք, որ ես իրականութիւնն եմ նկարագրում և նոր դրութիւն չեմ ստեղծում։

Կ. Ե Բասմաջեան

Պարիզ

ՏԻԿԻՆ ԿՐԻՒԳԵՐԻ ՄԱՀԸ

(«Նոր-Դար»-ի թղթակցից)

—

«Երբ մարդուս մէկ դժբաղդութիւն պատահի՝ ամեն կողմից նրա բանը կը-թարսուի»—ասում է ժողովրդական առածը։ Նման վիճակի մէջ է ընկել այժմ Տրանսվալի նախագահ Կրիւգերը։ Բաւական չէր նրան իւր ժողովրդի գոյութեանն սպառնացող ներկայ պատերազմը, բաւական չէին տարագիր ծերունու անյաջողութիւններն անկարեկից Եւրոպայում,—հասաւ նրան և մի նոր, անտանելի հարուած—իւր հաւատարիմ կընոջ մահը։ Հկայ այլ ևս քեռի Կրիւգերի 50 տարուայ հաւատարիմ ընկերը, քեռակին Սաննան։ Ամբողջ քաղաքակիրթ աշխարհն այժմ կարեկցում է ողբացեալ ծերունուն իւր ուշքը դարձնելով դէպի Հոլլանդիայի այն անկիւնը, որտեղ սգաւորի տան առջև սև դրօշակն է ծածանում։ Կրիւգերը շատ վիշտ է կրել, նա պատերազմի դաշտում է թողել որդի, թոռներ. սակայն ներկայ հարուածը նրա ընտանեկան կեանքում՝ ամենածանրն է, եթէ ի նկատի ունենանք այն մտերիմ յարաբերութիւնը, որը գոյութիւն ունէր երկու ամուսինների միջև, այն անսահման հոգատարութիւնը, որով տիկին Կրիւգեր նուիրուած էր իւր ամուսնուն՝ հասկանալի կը լինի նախագահ Կրիւգերի կրած մեծ կորուստը։ Կրիւգերը մեծ յոյս և հաւատ ունեցող անձնաւորութիւն է։ Նա երբէք իւր յոյսը չէ կորցրել, որ իւր երկիրը, իւր ժողովուրդն արդարութեան համար կռուելով՝ յաղթութիւն պիտի տանէ։ Նրա բաղձանքն էր վերադառնալ կրկին իւր ազատ հայրենիքը, իւր կնոջ տեսակցութեանն արժանանալ։ Վերջին փափագը խորտակուեց. մնում է առաջինը։ Արդեօք մի օր գոնէ ազատ հայրենիքի հողի վրայ պիտի գրկէ նա իւր կնոջ շիրիմը...։

Կրիւգերի վրայ կնոջ մահը, ինչ կասկած, խիստ, ծանր ազդեցութիւն կունենայ, բայց նրան ընկճել չի կարող, եթէ ի նկատի ունենանք մանաւանդ այն հանգամանքը, որ տիկին Կրիւգեր իւր ամուսնու քաղաքական գործունէութեան վրայ ամենևին ազդեցութիւն չունէր, նա չէ խառնուել քաղաքական գործերում, նրա միակ ջանքն է եղել իւր ամուսնուն հոգ տանել։ Իսկ տիկին Կրոնիէ, տիկին Բոթա, նաև տիկին Ժուբեր կարևոր ազդեցութիւն են ունեցել իրենց ամուսինների քաղաքական գործունէութեան վրայ։ Այդպիսի կանանց տեսակին չէր պատկանում հանգուցեալը։ Երբ երիտասարդ Կրիւգեր նրա ձեռքն է խնդրում, ամաչկոտութեամբ պատասխանում է նա. «Ես գիտեմ միայն հաց թխել, կերակուր եփել, կար ու լուացք անել և տուն սրբել»։ Եւ իսկապէս, իւր ամբողջ կեանքի ընթացքում հանգուցեալը եղել է օրինակելի տանտիկին։ Տնային աշխատանքները նա միշտ ինքն է կատարել, չկամենալով աղախիններին ու ծառաներին վստահանալ իւր գործը։ Իւր հագի զգեստներն էլ ինքն է կարելիս եղել։ Մեր բազմաթիւ անգործ պճնասէր, իրենց շռայլութիւնով ամուսիններին սնանկացնող «խանում»-ները մի երկրի պետի այսպիսի համեստ կնոջից շատ բան ունեն սովորելու։ Մաքուր, անպաճոյճ հագուստով, իւր, պրեսորիացիներին լաւ ծանօթ, ինչպէս և Կրիւգերի ցիլինդրը, սրածայր գլխանոցով, մետաքսէ գոգնոցն առջևը կապած տիկին Կրիւգեր ամեն օր առաւօտեան վաղ ոտքի վրայ է եղել այցելուներ ընդունելու։ Նա խիստ հրապարտ է եղել իւր բազմանդամ ընտանիքով։ Նա ունեցել է 16 որդի և աղջիկ, 50 թոռներ։ Պր. Վայնբերգ, «Ռէյտերի գործակալութեան» նախկին ագենտը, Կրիւգերի տան մօտիկ բարեկամներից մէկը, խիստ գովասանական, գեղեցիկ գոյներով է նկարագրում հանգուցեալին «Դէյլի Նեւս»-ում։ Երբ 1900 թ. յունուարի դէպքերը տիկ. Կրիւգերին պատմեցին՝ լաց եղաւ նա լալագին. «Ինչի՞ համար է այդ կռիւը», — գանգատուեց քեռակին Սաննան «ինչ կասեն այն մայրերն ու կանայք, որոնք իրենց սիրելիների մահը կը լսեն»։ Այդ կռուի դաշտում է թողել նա ինքը և իւր որդիներից մէկին և երեք թոռներ. սակայն հաստատութեամբ տարել է հարուածները։ Լցուած բուռն սիրով դէպի իւր հայրենիքն ու երկիրը՝ նա երբէք յոյսը չէ կտրել, թէ Աստուած վերջապէս օգնութեան պիտի հասնէ իւր ժողովրդին։ Թէև բնութիւնից խաղաղասէր, բայց և այնպէս նա իւր ամուսնուն մենակ չէ թողել արշաւանքների ժամանակ, «քեռին» և «քեռակինը» միշտ միասին պիտի լինէին։ Եւ խիստ ծանր էր, անշուշտ, այն բոպէն, երբ 1900 թ. սեպտ. 12-ին երկու ամուսիններն ստիպուած եղան բաժանուել իրարից, երբ նախագահ Կրիւգեր յոյսերով Եւրոպա էր ուղևորուում։ Հանգուցեալն անտարակոյս ուղեկցած կլինէր իւր ամուսնուն այդ ճանապարհորդութեան ընթացքում, եթէ նրա ծանր հիւանդութիւնն արգելք չլինէր։ Դեռ 12 տարի առաջ բռնուել էր ջրգողութիւնով, շատ անգամ նոյն իսկ շաբաթների ընթացքում անկարող լինելով տնից դուրս գալ։ Երբ տիկին Կրիւգերը ծանր հիւանդացաւ՝ Կիտչեներն ամեն միջոց գործ է դրել պատերազմի լուրերը նրանից հեռու պահելու։ Թէ լորդ Ռոբերտս և թէ Կիտչեներ խիստ մեծ ակնածութիւն են ունեցել դէպի հանգուցեալը։ Նրան թոյլ տուուց իւր տանը մնալ։

Մի անգամ Կրիւգերին երկու քարէ առիւծներ են ընծայում, որոնք նրա տան առջև են տեղաւորուում։ Այս դէպքը դժգոհութիւն է առաջացնում տիկին Կրիւգերի մէջ. նա կանխատեսելով ասում է, թէ կենդանին դժբաղդութեան նշան է, և թէ՝ երբէք բաղդաւորութիւն չի իջնիլ այն տան վրայ, որի առջև անգլիական առիւծներ են բազմած։ Իրականութիւնն յետոյ նա իւր աչքով տեսաւ։

Տիկին Կրիւգերի հոգսը դէպի նոյն իսկ անասունները, թռչունները՝ օրինակելի է եղել. երբ վճռում են Կրիւգերին արձան կանգնեցնել, խնդրում է նա քանդակագործին, որ սա Կրիւգերի ցիլինդրը, նրանից անբաժան, խոռոչաձև քանդակէ, որպէս զի անձրևի ջուր հաւաքուի այնտեղ և երկնքի թռչունները գան իրենց ծարաւը յագեցնեն։ Այդպէս էլ եղաւ։ Ամեն անգամ անձրև գալիս ջուր է հաւաքւում արձանի ցիլինդրի խոռոչի մէջ և թռչունները գալիս խմում են։

Տիկին Կրիւգեր պատմական նշանակութիւն ունեցող կանանցից չէր, բայց նա պատմական նշանակութիւն ունեցող ամուսնու հաւատարիմ ընկերն է եղել, նրա հոգատարը, հետևապէս այդ անձնաւորութեան ոյժի, զօրութեան կարեւոր տարրերից մէկը, ամենամեծը։ Իսկ քանի որ կենդանի է օգնութեան, հոգատարութեան կարօտ այդ անձնաւորութիւնը, ուստի և նրա համար իւր անփոխարինելի կորուստն անչափ մեծ է։ Ցանկանանք զառամեալ ծերունուն ոյժ՝ իւր ծանր վիշտն առանց ընկճուելու քաշել։

Ար. Աբեղեան

Մարբուրգ (Գերմանիա), 25 յուլ. (Ն. տ.)

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՖՐԻԿԱ

Բոէրները նորից ներս են խուժել Կապի գաղութը, որտեղ այդ պատճառով սարսափ է տիրում։ Կապշտադից հաղորդում են «Frank. Zeit»-ին յուլիսի 10-ից, որ այս անգամ գործն այնպէս չէ, ինչպէս այն ժամանակն էր, որ բոէրներն առաջին անգամ ներս խուժեցին այդ գաղութը։ Դրութիւնն սպառնալից բնաւորութիւն է ստանում այն պատճառով, որ Կապի գաղութի հիւսիսային և կեդրոնական մասում ապրող բոէրներն այժմ արդէն ապստամբում են ոչ թէ կէնտ ու կունտ, այլ ամբողջ խմբերով։ Անգլիական իշխանութիւնը վիճակագրական տեղեկութիւններ է հաւաքում այդ ապստամբների թուի մասին, գրի առնելով այն բնակարանների ու տների թիւը, որ ձգում հեռանում են գաղութի բնակիչները։ Բոէրներն այժմ արդէն հանդէս չեն գալիս առաջուայ պէս վախկոտ խմբակներով, որոնք գիշերներն էին միայն համարձակւում յարձակում գործել, իսկ ցերեկը նահանջ էին տալիս անգլիական զինուորների առաջ։ Այժմ բոէր ապրստամբը համազգեստով է, տակն ունի լաւ ձի, ասպետաբար է վերաբերում դէպի բնակչութիւնը և սրտի խորքից արհամարհում է իւր թշնամուն։ Նա երկրի տէրն է համարում իրեն և յաճախ անգլիական բերդապահ զօրքը յաճախ դուրս էր սողում բերդից և անհանգիստ անում բոէրներին։ Երբ այդ բանը նրանց ձանձրացրեց, նրանք հրամայեցին անգլիացիներին, որ դուրս չգան քաղաքից, այլապէս կը-բակի կըմատնեն այն։ Անգլիացիները չլսեցին, այդ պատճառով բոէրները հրդեհեցին Մուրանսբուրգի վարչական բոլոր շէնքերը։

— «Standard»-ի Կապշտադի թղթակիցը հաղորդում է, թէ լորդ Կիտչեներն օգոստոսին թողնելու է հարաւ աֆրիկեան զօրաբանակի գլխաւոր հրամանատարի պաշտօնը և վերադառնալու է Անգլիա, որտեղ կըմնայ հինգ ամիս և ապա յանձն կառնի Հնդկաստանի զօրքերի գլխաւոր հրամանատարութիւնը։ «Liverpool Post»-ի ասելով, այդ լուրն ընդհանուր համակրութեամբ է ընդունւում և բացատրւում է իբրև ապացոյց, որ անգլիացիների գրութիւնը Հարաւային Աֆրիկայում անյուսալի է։ Կիտչենների հաւանական յաջող համարում է գեներալ Լիտլտոն։ Վերջինս այն կարծիքն է յայտնել, թէ բոէրներին և անգլիացիներին պէտք է հնարաւորութիւն տրուի խաղաղ ապրելու մասին։

— «Standard»-ի ասելով, Ջոժեֆ Չեմբերլէնը շուտով գնալու է Ամերիկա, որտեղ մի ուղևորութիւն պիտի կատարի Միացեալ Նահանգներում բոէրասիրական ընթացքի դէմ կռուելու համար։

— Դրեզդենում արձան է կանգնեցրած նախագահ Կրիւգերին։ Կրիւգերը կանգնած է բնական մեծութեամբ, ձախ ձեռքին աւետարան։ Արձանի պատուանդանի վրայ ներկայացրած են Բոթան և Դեւետը։ Պատուանդանը վերջանում է վիշապի գլխով, որի դիմագծերը յիշեցնում են Չեմբերլէնի դէմքը։ Արձանի տակ մակագրուած է ոսկեայ տառերով. «Կեցցէ՞ Տրանսվալ և ազատութիւն» և «Ամեն ինչ լաւ կըվերջանայ»։

—

ՍԵՐԲԻԱ

Բելգրադից «Paris Nouvelles»-ին հաղորդում են, որ Ալէքսանդր թագաւորն ու Դրագա թագուհին մտադիր են Ռուսիա այցելելուց յետոյ այցելել Կ. Պոլիս և Սոֆիա։ Կ. Պոլսում Ալէքսանդր թագաւորը սուլթանին, ի միջի այլոց, կը-բացատրի սերբերի սարսափելի վիճակը Հին Սերբիայում և կըխնդրի, որ արմատական միջոցներ ձեռք առնուեն այդ վիճակը թեթևացնելու համար։

—

ԲՈՒԼԳԱՐԻԱ

Սարաֆովի և մակեդոնական կոմիտեի միւս անդամների դատը կըսկսուի օգոստոսի վերջը։ Նրանց պաշտպանելու են մեծ մասամբ ամենայայտնի փաստաբաններ, թուով տասնեհինգից աւելի։ Մեղադրական նիւթի ուսումնասիրութիւնն այդ փաստաբաններին այն եզրակացութեան է բերել, որ Սարաֆովն ու ընկերները կարդարացուեն մեղադրական փաստերի պակասութեան պատճառով։ Բայց կառավարութեան ձեռքին մի խոշոր միջոց կայ մակեդոնական կազմակերպութեան դէմ. նա կարող է դատավճիռը բեկանելով դատը երկարաձգել շատ ամիսներ, որոնց ընթացքում մեղադրեալները կըպահուեն բանտում այն հիման վրայ, որ բուլգարական օրէնքներով կառավարութիւնը չի կարող հարկադրուած լինել մեղադրեալներին ազատ արձակել երաշխաւորութեամբ, եթէ նրանք մեղադրւում են սպանութեան համար։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

Պեկինի դեսպանները պայմանաւորուեցին յուլիսի 25-ին ստորագրել արձանագրութիւնը, բայց յուլիսի 24-ի երեկոյեան բրիտանական դեսպանը յայտնեց իւր ընկերներին, որ Անգլիան չի կարող ստորագրել. պատճառները չբացատրեց։ Այս պատճառով դեսպանները ժողովը յետաձգեցին անորոշ ժամանակով։

—Անգլիական պատգամաւորների ժողովում Սպենսեր տեղեկութիւններ է պահանջում Չինաստանի մասին և մատնանիշ է անում, թէ ասում էին, որ իբր թէ անգլո-գերմանական համաձայնութեան մասին տեղի ունեցող բանակցութիւնների հէնց սկզբում Գերմանիան յայտարարել էր, որ այդ համաձայնութիւնը չի վերաբերում Մանջուրիային։ Սոլսբըրին ընդհատում է ճառախօսին և ասում, թէ այդ պնդումը, որ իբր թէ անգլո-գերմանական համաձայնութեան մասին եղած բանակցութիւնների հէնց սկզբում Գերմանիան յայտարել էր, թէ այդ համաձայնութիւնը չի վերաբերում Մանջուրիային,—չի համապատասխանում իրեն յայտնի իրողութիւններին։ Լանսդաունը յայտարարում է, թէ Չինաստանի հետ բանակցութիւններն առաջ գնացին համեմատաբար արագ կերպով և միայն մի կամ երկու կէտ մնում են դեռ ևս չլուծուած և մանրամասն քննութիւն են պահանջում։ Անգլո-գերմանական համաձայնութեան վերաբերմամբ ենթ-քարտուղարն ի նկատի է կացուցանում, որ գերմանական կառավարութիւնը հասկացրել էր, թէ ինքը Մանջուրիայի վրայ նայում է ոչ իբրև մի այնպիսի տեղի վրայ, որի վրայ տարածւում է գերմանական ազդեցութիւնը այլ նա ի նկատի ունէր Մանջուրիայի մրակ երկու նաւահանգիստները, որոնց վերաբերմամբ համաձայնութիւնը կարող էր գործադրուել և որոնք արդէն բաց նաւահանգիստներ են դարձած։ Գերմանական կառավարութիւնը սակայն յայտարարել էր, թէ իրեն համար ցանկալի չէ տեսնել ոչ մի այնպիսի համաձայնութիւն, որը խանգարելու լինէր Չինաստանի հողերի ամբողջութիւնը։ Թեանձինի վիճելի հողի վերաբերմամբ ճառախօսն ասաց, որ ռուս զինուորական իշխանութիւնն իւր զինուորներին հեռացրել է երկաթուղու կայարանի մօտ եղած տեղից։ Անգլիա-

*) Սոյն գրութեան պատասխանատուութիւնը լիովին թողնում ենք նամակագրի վրայ։ Խմբ.

կան կառավարութիւնը հոգացողութեամբ է վերաբերում անգլիական առևտրական և քաղաքական շահերին և ոչ մի ջանք չի խնայում ամենահաշտեցուցիչ ուղղութիւն տալու Ռուսիայի և Անգլիայի միջև եղած ընթացիկ դժուարին խնդիրներին։

—Յուլիսի 26 ին, կէսօրին ռուսաց նաւախումբը ժամանեց Վառնա և թնդանօթաձգութեամբ ողջոյն փոխանակեց բուլղարական «Նադեժդա» նաւի հետ։ Նաւամատոյցում փոխ ծովակալ Դիլդերբանդին ողջունեցին Կարաւելով և Սարաֆով մինիստրները և զեներալ Պապրիկով իշխանի և կառավարութեան կողմից։ Դիլդերբանդն այցելեց մինիստր-նախագահին ու միտրապոլիտ Սիմէօնին և ապա վերադարձաւ ծովակալական նաւը։ Բուլղարական նաւերն ու քաղաքը զարդարուած են ռուսական և բուլղարական դրօշակներով։ Հաւաքուած էր ահագին ամբոխ, որը ցնծագին ողջունում էր ծովակալին և նաւաստիներին։

Խմբագիր հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ՝

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(1901 թ. մայիսի 6-ից)

Ժամերը նշանակում են Պետերբուրգի ժամանակը, փակագծերի մէջ—Թիֆլիսի ժամանակը։

Արագընթաց գնացքը № 2 Թիֆլիսից Բագու մեկնում է (շաբաթը մի անգամ, հինգշաբթի օրերը) 9 ժ. 17 ր. (10 ժ. 15 ր.) առ., հասնում է Բագու 10 ժ. 40 ր. (11 ժամ 38 ր.) եր.։

Արագընթաց գնացքը № 1 Բագուից Թիֆլիս մեկնում է հինգշաբթի օրերը 5 ժ. 20 ր. (6 ժ. 18 ր.) առ., Թիֆլիս հասնում է 7 ժ. 25 ր. (8 ժ. 23 ր.) եր.։

Արագընթաց գնացքը № 1 Թիֆլիսից Բաթում մեկնում է 9 ժ. 11 ր. (10 ժ. 9 ր.) առ., հասնում է Բաթում 7 ժ. 58 ր. (8 ժ. 56 ր.) եր.։

Արագընթաց գնացքը № 2 Բաթումից Թիֆլիս մեկնում է 9 ժ. 45 ր. (10 ժ. 43 ր.) եր., հասնում է Թիֆլիս 7 ժ. 57 ր (8 ժ. 55 ր.) առ.։

Պոստային գնացքը № 3 Բագուից Թիֆլիս մեկնում է 10 ժ. 15 ր. (11 ժ. 13 ր.) եր., Թիֆլիս հասնում է 4 ժ. 13 ր. (5 ժ. 11 ր.) ցերեկուայ. Թիֆլիսից Բաթում մեկնում է 5 ժ. 27 ր. (6 ժ. 25 ր.) եր., Բաթում հասնում է 6 ժ. 30 ր. (7 ժ. 28 ր.) առ.։

Մարդատար գնացքը № 5 Բագուից Թիֆլիս մեկնում է 12 ժ. 27 ր. (1 ժ. 25 ր.) ցերեկուայ, Թիֆլիս հասնում է 5 ժ. 51 ր. (6 ժ. 49 ր.) առաւօտեան. Թիֆլիսից Բաթում մեկնում է 6 ժ. 49 ր. (7 ժ. 47 ր.) առ., Բաթում հասնում է 6 ժ. 48 ր. (7 ժ. 46 ր.) եր.։

Պոստային գնացքը № 4 Բաթումից Թիֆլիս մեկնում է 10 ժ. 17 ր. (11 ժ. 15 ր.) եր., Թիֆլիս է հասնում 10 ժ. 40 ր. (11 ժ. 38 ր.) առաւօտեան. Թիֆլիսից Բագու մեկնում է 11 ժ. 48 ր. (12 ժ. 46 ր.) ցերեկուայ, հասնում է Բագու 5 ժ. 40 ր. (6 ժ. 38 ր.) առ.։

Մարդատար գնացքը № 6 Բաթումից Թիֆլիս մեկնում է 8 ժ. 15 ր. (9 ժ. 13 ր.)առ., հասնում է Թիֆլիս 7 ժ. 38 ր. (8 ժ. 36 ր.) երեկոյեան. Թիֆլիսից Բագու մեկնում է 8 ժ. 18 ր. (9 ժ. 16 ր.) եր., Բագու հասնում է 12 ժ. 40 ր. (1 ժ. 38 ր.) ցերեկուայ։

Պոստային գնացքը Թիֆլիսից Կարս մեկնում է 10 ժ. (10 ժ. 58 ր.) եր., հասնում է Սանահին 2 ժ. 56 ր. (3 ժ. 54 ր.), Ղարաքիլիսա—5 ժ. 4 ր (6 ժ. 2 ր.) առ., Ալէքսանդրապոլ—8 ժ. 37 ր. (9 ժ. 35 ր.) առ., Կարս—12 ժ. 23 ր. (1 ժ. 21 ր.) ցերեկուայ։

Պոստային գնացքը Կարսից Թիֆլիս մեկնում է 4 ժ. 12 ր. (5 ժ. 10 ր.) ցերեկուայ, հասնում է Ալէքսանդրապոլ 7 ժ 40 ր. (8 ժ. 38 ր.) եր., Ղարաքիլիսա—11 ժ. (11 ժ. 58 ր.) գիշերուայ, Սանահին—1 ժ. 15 ր. (2 ժ. 13 ր.) գիշ., Թիֆլիս—6 ժ. 15 ր. (7 ժ. 13 ր.) առ.։

Ապրանքատար-մարդատար գնացքը Թիֆլիսից Ղարաքիլիսա մեկնում է 8 ժ. 10 ր. (9 ժ. 8 ր.) առ., հասնում է Սանահին 3 ժ. 55 ր. (4 ժ. 53 ր.), Ղարաքիլիսա—7 ժ. 28 ր. (8 ժ. 26 ր.) եր.։

Ապրանքատար-մարդատար գնացքը Ղարաքիլիսայից Թիֆլիս մեկնում է 6 ժ. 8 ր. (7 ժ. 6 ր.) առ., հասնում է Սանահին 8 ժ. 57 ր. (9 ժ. 55 ր.) առ., Թիֆլիս—6 ժ. 05 ր. (7 ժ. 03 ր.) եր.։

Թիֆլիս Բորժոմ

Մարդատար գնացքը № 7 Թիֆլիսից Բորժոմ մեկնում է 1 ժ. 40 ր. (2 ժ. 38 ր.) ցերեկուայ, հասնում է Մցխէթ 2 ժ. 16 ր. (3 ժ. 14 ր.), Դոբի—3 ժ. 37 ր. (4 ժ. 45 ր.), Միխայլովո—4 ժ. 59 ր. (5 ժ. 57 ր.), Բորժոմ—6 ժ. 40 ր. (7 ժ. 38 ր.) եր.։

Մարդատար գնացքը № 8 Բորժոմից Թիֆլիս մեկնում է 1 ժ. 5 ր. (2 ժ. 3 ր) գիշ., հասնում է Միխայլովո 2 ժ. 15 ր. (3 ժ. 13 ր.), Դոբի—4 ժ. 29 ր. (5 ժ. 27 ր.), Մցխէթ—6 ժ. 2 ր. (7 ժ.), Թիֆլիս—6 ժ. 45 ր. (7 ժ. 43 ր.) առ.։

Մցխէթ-Թիֆլիս

Ամաբային գնացքը № 18 Մցխէթից Թիֆլիս մեկնում է 5 ժ. 22 ր. (6 ժ. 20 ր.) եր., հասնում է Թիֆլիս 6 ժ. 01 ր. (6 ժ. 59 ր.) եր.։

Միխայլովո-Թիֆլիս

Ամաբային գնացքը № 20 Միխայլովոյից Թիֆլիս մեկնում է 6 ժ. 49 ր. (7 ժ. 47 ր.) եր., հասնում է Դոբի 7 ժ. 55 ր. (8 ժ. 53 ր), Մցխէթ—9 ժ. 31 ր. (10 ժ. 29 ր.), Թիֆլիս—10 ժ. 14 ր. (11 ժ. 12 ր.) եր.։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՄԵԾ ՍՍԼԱ գիւղի ծխական դպրոցի համար հարկաւոր է

ՄԻ ՅԵՆԶԱՒՈՐ ՈՒՍՈՒՑԻՉ,

որ ունենալու է երգեցողութեան դասեր եւ. ռոճիկ 300 ր., բնակարան և վառելիք։ Մանրամասնութիւնների համար դիմել հետեւեալ հասցէով՝ Нахичевань на Дону село Большіе Салы, священнику Алексіаносу Чораянцъ.

(683) 6—4

Մամուլի տակ է և մինչև սեպտեմբերի վերջը լոյս կըտեսնի Վ. Փափազեանի

„ԷՄՄԱ“ ՎԷՊԸ

350—400 մեծադիր երես

Վաղօրօք բաժանորդ գրուողների համար ճանապարհածախսով 1 ր.։ Լոյս տեսնելուց յետոյ կրլինի ճանապարհածախսով 1 ր. 25 կ.։

Բաժանորդ կարելի է գրուել Բագումում պ. Ս. Օհանջանեանցի մօտ՝ Магазинъ бывшій Л. П. Петросянъ, կամ պ. Ի. Մելիքեանի մօտ՝ Фотографія „Рембрандтъ“ Торговая. Բալախանում՝ պ Իշխան Միրզաբէկեանի մօտ՝ А. Меликовъ и Ко Բիրի Հէյրաթում՝ պ. Արշակ Տէր Յովհաննիսեանի մօտ՝ Бр. Набатовы и Ко. Շուշում պ. Ղազար Տէր Ղազարեանի մօտ։ Թիֆլիսում՝ պ. Արշակ Մեհրաբեանի մօտ՝ «Ցարազ» շաբաթաթերթի խմբագրատանը։

(688) 3—3

ԿԱՊՍԻՒԼՆԵՐ ՄԱՏԻԿՈՅԻ
[Capsules au Matico]
ԳՐԻՄՈ ԵՒ ԸՆԿ. ԴԵՂԱՑՈՐՆԵՐԻ
Թոյլ է տրուած Ռուսիայում։

Ողողութեամբ գործ է ածւում հոնորէի բժշկութեան ժամանակ, երբէք չյոգնեցնելով ստամոքսը, ինչպէս այդ լինում է, երբ գործ է ածւում Կոպայի բալզամը հեղուկ ձևով։

Парижъ, 8, Rue Vivienne և գլխաւոր դեղատներում։

7728 23—13

Վաճառւում են *Յովհաննէս Շահ-Նազարեանի* հետեւեալ աշխատութիւնները.

1. «*Նոր-Փորձ*» գրական և հասարակական հանդէս № 1 (սակաւաթիւ) գինն է ճանապարհածախսով . . . . 85 կ.

2. «*Անմեղ զոհեր*» (Կանայք Գ. Զուբարի Վէպիկներում) (սակաւաթիւ) գինն է ճանապարհածախսով . . . . 60 կ.

3. «*Ս. Աբովեանի* գրական և հասարակական գործունէութիւնը» (սակաւաթիւ) գինն է ճանապարհածախսով . . 45 կ.

Դիմել՝ Москва, Тверская, домъ Гиршманъ, кв. 22. И. Г. Шахъ-Назарянъ. 5—2
(0)

ԱՐՑԱԽԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՅԻ

համար հարկաւոր են մի ուսուցիչ ռուսաց լեզուի, մի աստուածաբան կրօնական առարկաների և մի ուրիշը հայոց լեզուի, մատենագրութեան և եկեղեցական պատմութեան համար։

Ռուսաց լեզուի համար պահանջւում է համալսարանի կամ ինստիտուտի վկայական, միւս առարկաների համար արտաստանի կամ ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի վկայական։

Դպրանոցի հոգաբարձութիւնը և տեսուչը խնդրում են ցանկացողներին դիմել փութով տեսչին՝ պայմանների մասին տեղեկանալու և պայմանաւորուելու։

Տեսչի ժամանակաւոր հասցէն. Թիֆլիս, Ս. Սարգսի վանք։
Ի տեղի նախագահի հոգաբարձութեան՝
Գարեգին աւագ քահ. Յովհաննիսեան
Տեսուչ դպրանոցի՝ *Բենիկ Վարդապետ*

(687) 5—4

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ իւր ատեանում օրուայ ժամը 12-ին, յուլիսի 28-ին տեղի կունենայ աճուրդ վերաշինելու կոյուղին բետոնով 0,375×0,25 սաժէն երկարութեամբ մօտաւորապէս 62,00 սաժէն արդէն գոյութիւն ունեցող կոյուղուց Վոլովոզնոյի փողոցից մինչև Սապեօրնի փոքրիկ փողոցը 1154 բուրլի դումարով։ Աճուրդին մասնակցել ցանկացողները պայմաններին կարող են տեղեկանալ քաղ. վարչութեան շինարարական բաժնում ամեն լի օր ժամը 9-ից մինչև օրուայ 3-ը։

(693) 3—3

ՍԱՆԱՏՈԳԵՆ

ԱՄՐԱՊՆԴՈՂ ԴԵՂ,

ՈՐ ԲԺԻՇԿՆԵՐԸ ՋԵՐՄԱԴԻՆՍ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՆ

Գործածել իբրև սննդարար միջոց ստամոքսի և աղիքների ցաւի ժամանակ, երեխանց սննդառութեան խանգարման ժամանակ, ուժասպառ հիւանդութիւններից առողջանալիս, և իբրև սնունդ սատակացնող մի. ջոց ծիծ տուող մայրերի համար։ Այս բանը

ՓԱՌԱՒՈՐԱՊԷՍ

Հաստատել են գիտնական մանրամասն հետազօտութիւններով պրոֆ. v. BERGMANN, EULENBURG, TOBOLD Բերլինի համալսարանի կլինիկներում, պրոֆ. v. SCHRÖTTER Վիեննայի համալսարանի ներքին հիւանդութիւնների կլինիկի III բաժանմունքում պրոֆ. v. FRUHWALD Վիեննայի մօտ գտնուած երեխանց բուժարանում ևն. ևն.

Պատրաստում է **BAUER & CIE** ֆիրման, Բերլին, O. S. 16.

Վաճառւում է դեղատն. դեղատնային խանութն. և դրոգիստների մօտ

Իսկականը միայն ռուսական փաթեթի մէջ եղածն է։

(M.) 61422· 10—10

ՆՊԱՍՏՈՒՄ Է ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆԸ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱՆ ՄԻՋՈՑ
ԳՈՒՄՄԻ-ՊԵՊՍԻՆ
ԴԵՂԱԳՈՐԾ Ի. ՊՕՂՈՍՍԿՈՒ Pemmi Gupsin
ՊՆՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Համեղ կենդարար կոնֆետներ, մեքենաբար մաքրում են առամները, հականեխում և հաճելի հոտ են տալիս բերանի խորշին և ընդերքին։ Գումմի-Պեպսինը գործածելիս նուազում է ծխախոտ ծխելու ցանկութիւնը։ Իւրաքանչիւր շերտկոնֆետ պարունակում է ամենալաւ Պեպսին և «Գումմի», որը հաճելի է և անվերջ ծամում է։

ԳԻՆՆ Է 30 ԿՈՊ.

Վաճառւում է դեղատներում և դեղատնային խանութներում

Պահեստը՝ СПБ. Вас. Остр., 4 лин., д. 39.
Վաճառւում է՝ Южно Русское О-во апт. тов. և ուրիշների մօտ։ (M.) 35710 16—12

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
ՏԱՍՆԵՒԻՆՆԵՐՈՎԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանցը և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողներն ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկաները սրանք են. 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (սպարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համբիչի վրայ, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) Դեղագրութիւն (վատ ձեռքի почеркъ ուղղելը)։ Ուսումն սկսուելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնները՝ սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11 ը և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսերը հիմնողի բնակարանում Սոլոլակում, Ալէքսանդր Փրիդոնովի տանը, № 9, Լերմոնտովսկայա փողոցում։ Ծրագիրն ու կանոնները կարելի է ստանալ **ԶՐԻԱՊԷՍ** Եղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսերը հիմնողի տանը. въ Тифлисъ, С. П. Мануэльянцу. 25—7
(650)

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

մատեմատիկական առարկանների համար հարկաւոր է համալսարանարտ մի ուսուցիչ շաբաթական 18 դասով. ռոճիկը 1500 բուրլի։ Ցանկացողները կարող են դիմել Թիֆլիս, Ս. Սարգիս, Դարեգին աւագ քահանային։
(684) 3—3

Лучшія аттестація отъ учебнаго начальства.

За упѣшнія занятія благодарности

И. Я. БРОНЪ-ФОНЪ-БРЕННЕРЪ
преподаетъ
Полный курсъ БУХГАЛТЕРІИ
ПРЕДМЕТЫ ЗАНЯТІЙ:
1) Бхгалеря (двойная италіянска, 2) Коерческая ариѳеика 3) Куоерческая экономія. 4) Ариѳея(ка на счеахъ, 4) Торговыя и ексельныя узаконеня и 5) Коиерческая корреспонденця.
Курсъ 3-хъ-мѣсячный. Занятія ежедневныя. Плата за курсъ 60 руб. Ручательство и гарантія за успѣхи. Болѣе 1000 окончившихъ курсъ.
Михайловская № 71.
Собственный методъ преподаванія по собственнымъ сочиненіямъ, продающимся во всѣхъ книжныхъ магазинахъ.
Занятія съ 1-го числа

ведется по собств сочиненіямъ

(480) Годъ зни надцатый 100—58

Дозв. цензурою Тифлисъ, 1901 г июля 27-го дня Տպարան Ա. Ի. Պետրովի Типографія А. И. Петрова, Голов пр., № 12 Телефонъ № 387